

նական և արտասահմանի համայնարանների առաջ-
նակարգ դիմերը:

Պրոֆ. Եանժուլը իւր դասախօսութեան վեր-
ջը կանգ առաւ Ռուսաստանի և մասնաւորապէս Մոս-
կուայի վրայ: Բարեսրտութիւնը, ասաց նաւ եղել է
մշտապէս ռուս մարդու յատկանիշը, որին ապացոյց
կարող են լինել ռուս միլիտանտներէրի արած բազմա-
թիւ խելացի ու նպատակայարմար նուիրատուու-
թիւնները: Յաւային այն է՝ որ այդ հարուստները
իրանց բարեգործութեամբ շատ միակողմանի են,
մեծ մասամբ զոհողութիւններ են անում մի որոշ
նպատակի համար, անուշադիր թողնելով ժողովուր-
դի ուրիշ անհրաժեշտ պահանջները: Աւերման ցան-
կանք, ասաց դասախօսը, որ Ամերիկայում ձգած
սերմը, Կորնէլիի ձգած այն սերմը, որի համար
Անգղիայում Գլադստոնը դուշակել է արգիւնք 1 ին-
—30, տեղափոխուելով մեր հողի վրայ, տայ գոնէ
մի համեստ արգիւնք 1 ին—3, ունկնդիրների բու-
որն ծափահարութիւնը խլացրեց յարգելի պրո-
ֆեսորի վերջին խօսքերը:*

* Русское Слово № 54.

Թ. Ա.



1897 Թ. Ի ԸՆԹԱՏԳՈՒՄ ՏԵՂԻՊՈՒՆԵՑԱՆ ԱՆՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՆՆ ԶԵՆՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵ-
ԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Հիւսիսային թեւեռներ. — Բեկոններում նոր եր-
կիրներ գտնելու համար արած փորձերից վերջինը
և ամենահամարձակն է Էուեդալի Անդրէ Էէնէ
գիտնականի փորձը հիւսիս. բեկոնի հասնելու: Թու-
լիսի 11-ին (Թունիս 29) Էուեդալի Անդրէ հիւ-
սիսային ափերից Անդրէն և իւր երկու բնակները՝
Էտէյնըրը և Ֆրանկէլը, սակաւաթիւ գիտողների
ներկայութեամբ, որոնք ծանապարհ էին գնում նո-
յա ջերմագին բարեմաղթանքներով և ծափահարու-
թիւններով՝ օդապարիկ նստան: Օդաչու նաւը 290
—300 մետր բարձրանալուց յիսոյ, սկսեց լողալ
օդի մէջ դէպի հիւսիս և անյայտացաւ նոցա աչքից,
Ինչ եղաւ Անդրէի օդապարիկը՝ մինչև այժմ ոչինչ
յայտնի չէ: Միմեանց հակասող լուրեր են պատուած
նորա դարձին սպասող շրջաններում: Ոմանք ասում
են, թէ տեսել են նորա արձակած լրարեր աղա-
նուն, միւսները պատմում են թէ Սպիտակ ծովում
օդապարիկի նման մի բան է երևացել էլ:

Այն տարածութիւնը, որ Անդրէն մտադիր էր
կտրելու Էուեդալի Անդրէի նախ դէպի հիւսիս, ապա
դէպի Ալեքսանդրիա թերակղզին կամ արեւելեան Սիրիան,

հաւասար է 3600 կիլոմետրի, որ կարելի է անցնել
6 օրում: Իսկ Անդրէն ամենաշատը 10 օրում անց-
նելու յոյս ունէր: Սակայն անցան մի քանի տա-
նակ օրեր և ամիսներ, բայց օդաչուացնելից ոչ մի
լուր չկայ:

Միւս կողմից Էուեդալի և Գանէմարքան կաղ-
մակերպում են երկու գիտնական արշաւներ դէպի
Գրէնլանդիայի հիւսիսային ափերը, որտեղից վեր-
ջերս վերադարձաւ Ամերիկացի Պէտրի ծովակալը,
իւր հետ Եօրքի հրուանդանի մօտերից բերելով մի
առուպ (météorite), անխառն երկաթի 45000 կիլո-
գրամով՝ ծանրութեամբ, որ և տեղաւորեց Նիւեօրքի
թանգարանում:

Շպիցբերգի կղզին. — Եւրոպայի հիւսիսային կող-
մում գտնուող Էպիցբերգէն կղզին երկի շուտով մի
ամառնային կենդանատեղի կրգառնայ ծանապար-
հորդների համար: Կղզու Ազվէնտայ կայարանն ար-
գէն կանոնաւոր շոգնաւային երթևեկութիւն ունի
Համբերֆէտի հետ: Նորվեգիոյ կառավարութիւն
այնտեղ կառուցել էր փոստային գրասենեակ, ուր
ինչպէս յիշուեցաւ Եւրապայի մէջ, մինչև անգամ
հրատարակում է մի թերթ Spitzbergen Gazette՝
անունով: Կղզին հարուստ է որսերով, որպի-
սիք են՝ սպիտակ արջեր, եղջերուներ, փոկեր ևն:
Ապրիլի 20-ից մինչև օգոստոսի 22-ը մի օր է և շա-
բուանակ արեւը հորիզոնի վերայ է կանգնած: Հաս
հետու չէ այն ժամանակը, երբ Ազվէնտայը կը-
դառնայ նոր ձեւի մի գեղեցիկ քաղաք: Էպիցբերգէն
գտնւ է 16-րդ դարում Բարէնտ Լոյսնդացին՝ 2ի-
նաստանի ծանապարհը փնտռելու ժամանակ:

Հարաւային թեւեռ. — 1897 թ. մի գիտնական ար-
շաւանք էլ ուղղուեց դէպի հարաւային բեկոն:

Հարաւում բեկոնային ցամաքն աւելի ընդար-
ձակ է, բայց և աւելի անձամբ քան միւս բեկոնը:
Միայն նորա մի քանի ափերն են յայտնի, որ 1842
թ. բացեց ժամ Ռոսս գիտնականը, նաեւելով մինչև
750/0 հարաւային լայնութիւնը. ներկայ արշաւախմբի
նպատակն է ժամ Ռոսսի թեւի թողածը շարունակել:
Խմբի զլխաւորն է Գէրլաշ Նաւի հրամանատարը՝
— ըստ հետ են երեք օֆիցերներ, թնդանօթաձիգ զօրաց
հրամանատար և ֆիզիկոս պ Գանկոն, պ Ռակովի-
ցա բուսաբանը, երկրաբան պ. Արտոմսկին (Էնհա-
ցի), մի հարուստ անգղիացի բժիշկ պ. Ասօգ և մի
քանի նորվեգիացի հմուտ սառույցներում վարժուած
ու զիմացկուն նաւաստիներ: Արշաւախումբը վեր-
ցրել է նաև օդապարիկի սարք, ի դէպս գործածելու
համար: Բացի դրանից ունի ծանապարհի բոլոր յար-
մարութիւնները և 300,000 ֆրանկի գրամագուլան, որ
մասամբ հոգացել է Բելգիոյ կառավարութիւնը, իսկ
մասամբ մասնաւոր անձինք: Նաւը օգոստոսի 4/16-ին
մեկնեց Անգղիական ափից, նա Ռիօ Ժանէյրոյի
մօտով կանցնէ և Հօրն հրուանդանի մօտ ձմերկուից

յետոյ, գարնանը կշարունակէ ճանապարհը այն զը-
ծով, որով անցել էր ԺամՌասար:

1897 թ. Ոսկին և Ամերիկա. — Միացեալ Նահանգ-
ների դրամատան կառավարիչ պ. Պրէստոնը հետե-
եալ հետաքրքիր ցուցակն է տալիս 1897 թուակա-
նին փորած ոսկու մասին, Ամրոզը աշխարհում հա-
նուել է 1, 200,000,000 ֆրանկի ոսկի, որ այսպէս
է բաժանուում տէրութիւնների վերայ. Անգղիական
Հնդկաստանում 35,000,000, Զինաստանում 40,000
000, Հարաւային Ամերիկայում 40,000,000, Մէք-
սիկայում 45,000,000, Կանադայում 50,000,000,
Ռուսիայում (Սիրիիա) 120,000,000, Աւստրալի-
այում 280,000,000 և միացեալ Նահանգներում
300,000,000 ֆրանկի արժողութեամբ: Մինչև Ամե-
րիկայի գիւտը հանած ոսկին հաւասար էր 12,000
000 կիլոգրամի կամ 45,000,000,000 ֆր. արժո-
ղութեան:

Միացեալ Նահանգները վերջին անգամ էլ ցոյց
տուին, որ այնտեղ ամեն բան հսկայական կերպով
է կատարուում: Այգիսի մի դէպք է 'նիւ—Եօրկի
միացումն իւր շրջակայ քաղաքների հետ 'նիւ—
Եօրկը, չը բաւականանալով 1,800,000 բնակիչնե-
րով, իւր հետ միացրեց Լոնգ—Իսլանդի վերայ
գտնուած Բրոսկլին քաղաքը 1,000,000 բնակիչնե-
րով, այլև Լուիզան գետի աջ ափում գտնուած
բոլոր քաղաքներն ու գիւղերն, որոնց բնակիչների
ընդհանուր թիւը 'նիւ—Եօրկի հետ հասնում է
3,800,000-ի:

Այսպիսով 'նիւ—Եօրկը դարձաւ աշխարհիս
երկրորդ մայրաքաղաքը: Այդ ահաբիւն բազմու-
թիւնը կառավարում է մի քաղաքապետիս, որ ըն-
տրուում է 70,000 ձայնով:

Հուտով Հարաւային Ամերիկայի բոլոր հաստ-
րակապետութիւնները կը միանան և կը կազմեն Հա-
րաւային—Ամերիկայի Միացեալ Նահանգներ, 'նոցա
մայրաքաղաքը կը լինի Արգենտինեան հասարակապե-
տութեան Բուէնոս—Այրէս մայրաքաղաքը, որ
երկայումս 700,000 բնակիչ ունի:

Ամրիկա. — Փրանսիական քաղաքականութիւնը
անցեալ տարի Աֆրիկայում ձեռք բերեց այն ազ-
դեցութիւնը, ինչ որ Ռուսները Ասիայում ունին:
Անգղիացիք շատ վնասուեցին, մանաւանդ Հարէշ-
ների Խալաքուց դէմ տարած յաղթութիւններից
յետոյ:

Մադագասկար կղզին վերջնականապէս կորցրեց
իւր թագաւորութիւնը և լոկ ֆրանսիական մի զաղ-
թավայր դարձաւ: Անցեալ փետրուարի 27-ին Գալ-
լիէնի գններալը ոչնչացրեց 'նոցա բոլոր յեղափո-
խիչներին և Ռանափուր վերջին թագուհուն արքա-
րեց, 25,000 ֆրանկ կենսաթոշակ նշանակելով:

Պոյս աշխարհի շուրջը. — Վաղուց է անցել այն
ժամանակը, երբ Մագելլանը առաջին անգամ 1424
օրում պտտեց աշխարհիս շուրջը: այժմ հետըզ-
հետէ աւելի հեշտանում են միջոցները և այդ նպա-
տակի համար դործ դրած ժամանակը կարճանում:
Սուէշեան ջրանցքի միացումից և շոգու գիւտից յե-
տոյ այդ բանը հնարաւոր եղաւ 80 օրում: իսկ այժմ
պաշտօնական գրութիւններից երևում է, որ 63 օրն
էլ հերիք է դորա համար՝ այսպէս. Լոնդոնից մինչև
Բրինչի երկաթուղով 2 օր, այնտեղից ծովով մինչև
Սուէշ 5 օր—Ագէն 4 օր—Կոլմար 6 օր—Սին-
գապուր 6 օր—Լոնկլենց 6 օր—Նոնհամա (ճա-
փոնիա) 10 օր—Սան—Ֆրանչիսկո 13 օր—'նիւ—
Եօրկ երկաթուղով 4 1/2 օր—Լիվրպուլ 6 օր—
Լոնդոն 1 օր—ընդամենը 63 օր: Իսկ եթէ Սիրի-
րիոյ երկաթուղին պատրաստ լինի, այդ պտոյտը
կարելի է անել 34 օրում: Սակայն չի անցնիլ
20 տարի, երբ աշխարհի շուրջը կը պտտեն 25
օրում, եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը,
որ թէ երկաթուղիների և թէ շոգենաւերի դնացքը
հետզհետէ արագանում է և մանաւանդ, եթէ
փոխանակ Կորէայից Սան—Ֆրանչիսկո գնալու: Վան-
կովեր գնանք և այնտեղից Խաղաղական ովկիանոսի
գծով շարունակենք մեր ճանապարհը:

Ասիա. — Ասիայում ևս շատ նշանաւոր դէպքեր
տեղի ունեցան, որպիսիք են. 2ին—Ճափոնական
պատերազմը, որ վերջացաւ յօգուտ Ճափոնիայի:
Սաստիկ սով և ապա ժանտախտ պատահեց Հնդկաս-
տանում, որ անթիւ մարդկային զոհեր տարաւ: Եւ
վերջապէս նշանաւոր էր Հնդկաց ապստամբութիւնը
Անգղիական կառավարութեան դէմ, որ թէև առ-
ժամանակ յաջողութիւն գտաւ, բայց շուտով ըն-
կըճուեց. միայն մինչև այժմ՝ դեռ տեղ տեղ շա-
րունակուում է ապստամբութիւնը:

Եւրոպա. — Յայտնի է այստեղ Յոյն—թրքական
պատերազմը, փոքրիկ Յունաստանի համար ունեցած
ազէտալի հետեանքներով, Երկարատե ձգձգումից
յետոյ վերջերս հաստատած հաշտութեան պայման-
ները թողնում են երկու պետութեանց սահման-
ները նախկին դրութեան մէջ, Իսկ թէ ինչ վիճա-
կի կենթարկուի պատերազմի սկզբնապատճառ Կրետե
կղզին՝ այդ պէտք է դեռ յառաջիկայ տարին որոշէ:

Եւրոպայի ամենանշանաւոր դէպքը անցեալ
տարուայ Փրանս—Ռուսական զաշնակցութիւնն էր,
որի սկիզբը դրուեց այն ժամանակ, երբ 'նորին
Մեծութիւն Ռուսաց Կայսրը այցելեց Փրանսիա, և
հաստատուեցաւ, երբ դորա փոխարէն Փրանսիայի

նախագահ Պ. Ֆորը անցեալ ամառ այցելեց Ռուսիա, Այստեղ հանդիսաւոր ծաշի ժամանակ օգոստոսի 11/23-ին առաջին անգամ որոշակի արտասանուեց «Բաշնակցութիւն» խօսքը Ն. Մեծութեան Այսեր և նախագահ Պ. Ֆորի ծառերի մէջ.

Անդրիս. — Անցեալ տարի մեծաշուք կերպով Լոնդոնում տօնեցին Անդրիոյ Աիկտորիա թագուհու 60-ամեայ յօբեկանը, երբ նա դահ ըրաճրացաւ (1837 թ.), Անդրիայի կալուածներն էին միայն Կանադան, Լնդկաստանը և Աւստրալիան, իսկ նորա օրով այդ կալուածներն ընդարձակուեցան և հասան մինչև 29,000,000 քառ. կիլոմետրի, որ երեք անգամ մեծ է ամբողջ Եւրոպայի տարածութիւնից, Այդ հաշգին տարածութեան մէջ 385,000,000 մարդիկ են ապրում, որոնց հոփանին անգղիական զրօշակն է, Աիկտորիա թագուհին 1879 թ. հռչակուեցաւ կայսրուհի Լնդկաստանի, Արհեստների ու վաճառականութեան կողմից Անգղիան առաջին տեղըն է բռնում ամբողջ Եւրոպայում, Նա 18 միլիարդ Ֆրանկի առևտուր ունի տարեկան, Նորա ծովային պատերազմական ոյժը շատ մեծ է.

Ռուսաց կայսրութիւնն ընակիչների թուով զեռ շատ յետ է Անգղիայից, Աերջին ցուցակադրութեան ժամանակ երկաց, որ Ռուսիան 130,000,000 ընակիչ ունի, բայց մի քանի տասնեակ տարիներ յետոյ ամենայն հաւանականութեամբ նա առաջնակարգ տեղ կը բռնէ այդ կողմից.

Համեմատական ցուցակ մեծ որբոնութեանց ներքին և արտաքին քրոնութեան անցեալ 1897 թ.-ին:

Պետրիւնք.	Բնակիչ.	Տարածութիւն:
	քառ. կիլոմետր.	
Անգղիական կայսրութիւն	385,000,000	29,000,000
2ինաց կայսրութիւն	380,000,000	11,000,000
Ռուսաց կայսրութիւն	130,000,000	23,000,000
Եւրոպական Ռուսիա	107,000,000	5,000,000
Ֆրանսիա և կալուածք	90,000,000	12,000,000
Միացեալ Նահանգներ	70,000,000	9,300,000
Գերմանիա	53,000,000	540,000
Աւստրո-Հունգարիա	45,000,000	675,000
Ճափոնիա	45,000,000	420,000
Բրիտ. կղզիներ	40,000,000	315,000
Ֆրանսիա	38,500,000	537,000
Օսմանեան կայսրութիւն	33,000,000	4,000,000
Իտալիա	32,000,000	287,000

Եւրոպայից քրոն Գերմանիա և Լուստանիք:

Տիրոջ ազգեր.	քառ. կիլոմետր.
Անգղիացիք	29,000,000
Ռուսները	22,000,000

Տիրոջ ազգեր.	քառ. կիլոմետր.
Ֆրանսիացիք	10—11,000,000
Տաճիկները	4,000,000
Գերմանացիք	2,800,000
Պորտուգալացիք	2,500,000
Բէլգիացիք	2,400,000
Հոլլանդացիք	1,800,000
Սպանիացիք	800,000
Իտալացիք	600,000

Այդ Գերմանացիքն Էմանուէլի Ռիւ:

Անգղիացւոց կալուածներին	345,000,000
Ֆրանսիացւոց	55,000,000
Հոլլանդացւոց	33,000,000
Տաճիկաց	25,000,000
Ռուսաց	23,000,000
Բէլգիացւոց	20,000,000
Պորտուգալացւոց	11,000,000
Սպանիացւոց	10,000,000
Գերմանացւոց	9,000,000
Իտալացւոց	2,000,000

Եւրոպայի և Գերմանիայի Եւրոպայում առաջնութիւնը Գերմանացիքն Էմանուէլի Ռիւ:

քառ. կիլոմետր.	
Ռուսաց	5,500,000
Հունգարացիք—Նորվեգիացւոց	775,000
Աւստրո-Հունգարացւոց	675,000
Գերմանացւոց, Ֆրանսիացւոց, Սպանիացւոց	500,000
Մեծն Բրիտանիոյ կղզիք	315,000
Իտալացւոց	287,000

Բնակից քիւր.—Ռուսաց	107,000,000
Գերմանացւոց	53,000,000
Աւստրիացւոց	45,000,000
Մեծն Բրիտանիոյ	40,000,000
Ֆրանսիացւոց	38,500,000
Իտալացւոց	32,000,000
Սպանիացւոց	18,000,000
Տաճիկաց	9,000,000
Բուլղարացւոց	9,000,000
Բէլգիացւոց	6,500,000

Ծովային վաճառականությունը:

Անգղիան անում է . . .	8,500,000	տոննի
Հունգ.—Նորվեգիան . . .	2,000,000	"
Գերմանիան	1,500,000	"
Ֆրանսիան	4,000,000	"
Հոլլանդիան	250,000	"
Սպանիան	250,000	"
Իտալիան	250,000	"
Ռուսիան, Աւստրիան, . . .	} իւրաքանչիւրը	"
Հունգարիան,		
Դանեմարքան		

Ծովային առաքելութեան ուղիքը:

տոնն.

Անգղիան	700	նաւ.	85-ը	զրաճակիր	950,000
Ֆրանսիան	430	"	55-ը	"	500,000
Իտալիան	300				300,000
Գերմանիան					250,000
Ռուսիան					250,000
Աւստրո-Հունգ.					150,000
Թուրք., Սպան., Նիդերլանդիան, իւրաքանչ.					100,000

Անգղիայի ծովային ուղիքն հաւասար է Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսիայի ուղիքին միասին վերցրած, իսկ աւելի մեծ քան մնացած միւս բոլոր տէրութիւններին:

Յաճախային առաքելութեան ուղիքը:

	Եռօրյա ժամանակ.	պատերազմ. ժամակ.
	Ձիւնուոր.	Ձիւնուոր.
Ռուսիան	800,000	6,000,000
Գերմանիան	550,000	4,000,000
Ֆրանսիան	550,000	4,000,000
Աւստ.—Հունգարիան	350,000	3,300,000
Իտալիան	280,000	2,000,000
Անգղիան	200,000	1,000,000
Թուրքիան	200,000	1,000,000
Սպանիան	120,000	500,000

Արտադրութեան վաճառականությունը:

Ֆրանկ.

Անգղիան անում է	18,000,000,000
Գերմանիան	10,000,000,000

Ֆրանկ.

Ֆրանսիան	8—9,000,000,000
Բէլգիան	5,000,000,000
Ռուսիան	5,000,000,000
Նիդերլանդիան	4,500,000,000
Աւստրիան	3,700,000,000
Իտալիան	2,700,000,000
Զուիցերիան	2,000,000,000
Սպանիան	1,600,000,000
Հունգ.—Նորվեգիան	1,500,000,000
Դանեմարքան	800,000,000
Թուրքիան	800,000,000
Ռումանիան	800,000,000
Փորթուգալիան	400,000,000
Յունաստանը	400,000,000

Երկաթուղային գնի վաճառականը:

Նիւմեր.

Գերմանիայում	45,000
Ֆրանսիայում	40,000
Ռուսիայում	35,000
Անգղիայում	33,000
Աւստրո—Հունգարիայում	30,000
Իտալիայում	15,000
Սպանիայում	11,500
Բէլգիայում	5,500

Համեմատաբար այսպէս է ընկնում երկաթուղու գինը տարածութեան հետ. — Բէլգիայում գալիս է 1,500 կիլոմետր երկ. գինը 10,000 կիլ. տարածութեան:

Անգղիայում 1,200	10,000-ին
Գերմանիայում 850	10,000-ին
Ֆրանսիայում 700	"
Զուիցերիայում 700	"

Պատրուկային բերքի վաճառականը:

Ֆրանկ.

Ֆրանսիային	3,500 միլիոն
Անգղիային	} իւրաքանչիւրը
Գերմանիային	
Ռուսիային	
Աւստրո—Հունգարիային	2,500,000,000
Իտալիային	1,600,000,000

Հասարակաց պարտքերը Հասարակութեան

Ֆրանկ.

Ֆրանսիային	36.000.000.000
Անգղիային	17.000.000.000
Գերմանիային	17.000.000.000
Աւստրո—Հունգարիային	15.000.000.000
Իտալիային	14.000.000.000
Սպանիային	7.000.000.000
Թուրքիային	5.000.000.000
Փորթուգալիային	3.000.000.000
Նիդերլանդիային	2.000.000.000
Բելգիային	2.000.000.000

Արհեստների արդիւնքի հաշուած երկրագործական արդիւնքը).

Ֆրանկ.

Անգղիա	25.000.000.000
Գերմանիա	13.000.000.000
Ֆրանսիա	13.000.000.000
Ռուսիա	8.000.000.000
Աւստրիա	8.000.000.000
Իտալիա	4.000.000.000
Բելգիա	4.000.000.000
Զուիցերիա	2.000.000.000
Սպանիա	15.000.000.000
Ամերիկայի միացնահանգները	30.000.000.000

Սահմանափակ արհեստների արդիւնքը.

Ֆրանկ.

Անգղիա	280.000.000.000
Ֆրանսիա	240.000.000.000
Գերմանիա	150.000.000.000
Աւստրո—Հունգարիա	100.000.000.000
Ռուսիա	50.000.000.000
Իտալիա	50.000.000.000
Բելգիա	40.000.000.000
Նիդերլանդիա	25.000.000.000
Զուիցերիա	12.000.000.000
Դաննիմարքա	12.000.000.000
Միացեալ Նահանգներ	350.000.000.000

Իրաքանչիւր քաղաքացու ընկնում է.

Ֆրանկ.

Անգղիայում	7.000
Ֆրանսիայում	6.300
Բելգիայում	6.150
Հոլանդիայում	5.000
Զուիցերիայում	3.300
Գերմանիայում	3.000
Աւստրիայում	2.300

Հ. Թ.

ԱՅՈՒՆ ԵՒ ԱՅՈՒՆԻՔ

Հարկը քերտացնելու միջոց, Իտալիայում մտադրութիւն կայ ազնուականութեան տնտեսական տնտեսական հարկը թեթեւացնելու համար, Այսուհետեւ տուրք պիտի հաւաքուի իշխանական տնտեսական համար 40.000, զբոսութեան համար—30.000, մարկիզութեան համար—25.000, կոմսութեան համար 20.000, բարոնութեան համար 12.000, իսկ հասարակ ազնուականութեան համար—5000 ոսկի, Տուրքի հիւ-դ մասից երեքը միայն կ'առնուի այն զէպքում երբ տնտեսութեան գնումը առանց ժողովրդեցւորացնելու իրաւունքի:

* *

Ահաւր ընթացում վիճակում:—Լոնդոնի պարտիզպաններից մէկը հետաքրքրական դիտողութիւններով համոզուել է, որ մարդու և կենդանեաց պէս բոլոր համար էլ հարկաւոր է քուն և հանգստութիւն, որպէս զի լաւ աճէ, նա մտածեց, թէ եթէ բոլոր քնելու ընդունակ է, ապա ուրեմն նորան կարելի է նաեւ թմբեցնել, ուստի և փորձեց արմատն ու տերեւների բոլորըքը և թմբակել քլորակերպի գոլորշիների ազդեցութեան, Հետեանքը անսպասելի էր. դանդաղ աճող բոյսի ծիւրը երկու փորձից յետոյ սկսեց զարմանալի արագութեամբ զարգանալ, Ապա պարտիզպանը իւր մարդերի մէջ պնդեց միտեցակ բոյսերից բաղմամբ միահասակներ, որոնցից կէսը քլորակերպի ներգործութեամբ աճեցրեց, իսկ կէսը սովորական կերպով խնամեց, Արդէն մի շարքից յետոյ թմբեց ազդեցութեամբ աճողները միասնորից շատ առաջ գնացին, ամենայն օր նոցա աճումը աւելի էր զօրանում և մինչև որ առաջինները կատարեալապէս զարգացան, քլորակերպով շնուածները հազիւ թէ կիսով չափ բացուել էին:

* *